№ 104 ԿԻՐԱԿԻ, 18 ՄԱՅԻՍԻ — ԵՐԿՐՈՐԴ 1919 ՏԱՐԻ — ԿԻՐԱԿԻ, 18 ՄԱՅԻՍԻ №104

ეროვნული ბიბლიოთეკა

ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

Օրգան Հայ Ժողովրդական Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի

Խմբագրութիւնը բաց է ամէն օր առ. ժամը 9-ից մինչև 3-ը։ Յօդուածները պէտք է գրուած լինեն պարզ և մի երեսի վրայ։ Յօդուածները կարող են ենթարկուել փոփոխման և կրճատման։ Ընդունուած յօդուածները, որոնց տակ չէ գրուած վարձատրութեան պահանջ՝ կը համարուեն ձրի։

ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ

Յայտարարութիւններն ընդունւում են ամէն լեզւով տողատեղին առաջին երեսում 1 ռուբ., իսկ վերջին երեսում՝ 75 կոպ. Բժիշկների և աշխատանք փնտրողների համար որոշ զեղչ։ Մահազդի համար 25 ռուբլի։ Յայտարարութիւնները նոյն օրուայ թերթի համար ընդունւում են մինչև ժամը 2-ը։

ՇԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹ.

ապրիլի 1-ից

ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ

ՕՐԱԹԵՐԹԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է.

1 ամիսը . . . . 18 ռուբ.
3 » . . . . 50 »
Հատավաճառ . . . . 1 ռուբ.

Հասցէն՝ Тифлисъ, Гановская ул. д. № 8.

Գրասենեակը բաց է ամէն օր առաւ. ժամը 9-ից մինչև 3-ը, բացի կիրակի և տօն օրերից։ Телефонъ 2—53.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏ. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ հաշտարար բաժանմունքների և շրջանների համար հարկաւոր են

հաշտարար դատաւորներ եւ քննիչներ

Յայտարարութիւններն ընդունւում են ամէն օր ժ. 9—11 առաւօտ. Գրիբոյեդովսկի փող. № 26, Թիֆլիսում։ 6—12

ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՈՒԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹ. ԹԱՏՐՈՆՈՒՄ

Չորեքշաբթի մայիսի 21-ին, երեկ. ժ. 7 եւ կէսին կը կայանայ

ՀԱՄԵՐԳ

Նուիրուած Հ. Կոմիտասի ստեղծագործութեան։

ԾՐԱԳԻՐ.—Մի քանի խօսք հայր Կոմիտասի մասին՝ պրոֆեսոր Յ. Ա. Հարաման և Մ. Մաշէնճեան։ Կերգէ Թ. Հ. «Երգեցիկ» ընկերութեան երկսեռ խումբը ղեկավարութեամբ Սպ. Մելիքեանի։ Մասնակցում են սոլիստներ՝ տիկին Հարաման, օր. օր. Մելիք Բէգլարեան, Կազաքեան, Մ. Աղայեան, Էլբակեան, Տէր-Աբրահամեան։

Տոմսակները վաճառւում են Հայ Կանանց Միութեան դրասենեակում, Գանովսկայա, № 8, ժամը 12—3-ը։ 4—8

ԲԺԻՇԿ

Խ. ԷՅԵՐՋԵԱՆ

Նախկին ասիստենտ Պարիզի Hôtel-Dieu, պրոֆ. Cilbert-ի կլինիկաների, մասնագէտ թոքերի, սրտի, ստամոքսի, լեարդի, աղիքների և երեխայոց հիւանդութիւնների։ Մեթոդիկ բժշկում թոքախտի, պլեվրիթի, բրոնխիթի, անարիւնութեան, լեարդի ուռեցքի, arteriosclerose-ի (շնչերակների կարծրանալ) սոսկական անկարողութեան (էմբութացիա)։ Արմատ. բժշկում գլխացաւի կերարկութիւն ընթերային մասամբ սրտի հիւանդութեանց համար։ Ընդունելութիւնը առաւօտ. ժամը 10 1, երեկոյեան ժ. 5—7, կիրակի օրերը միայն 10—1։ Հասցէ՝ Միքայէլեան փ. № 41։ 100—31

ԲԺ. ԽԻՐՈՒՐԳ

Գ. ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆԸ

Վերադարձել է Թիֆլիս և վերանորոգել հիւանդների ընդունելութիւնը «Գրանդ-Հոտել» հիւրանոցում, ժամը 6—7 երեկոյեան։ 30—10

ԲԺԻՇԿ

Ա. Ա. ՏԷՐԵԱՆ

Ներքին եւ երեխաների հիւանդութիւնների

Ընդունելութիւնը ամէն օր, բացի կիրակի օրերից, առաւ. ժամը 10 և կէսից մինչև 12-ը և երեկ. ժամը 5—7-ը։ Չքաւորներին՝ ձրի։ Сололаки, Бебутовская ул., № 26, телефонъ 10—92. 30—10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊԱԳԱՅ ՊԱՐԼԱՄԵՆՏԸ

Մօտաւորապէս մի ամիս ու կէս յետոյ Հայաստանում կատարուելու են պարլամենտական ընտրութիւնները, որոնք կը տևեն երեք օր։ Այս ընտրութիւններում հայ ժողովուրդը հանդէս է գալու իր քաղաքական համոզմունքներն արտայայտելու և պիտի ձայն տայ այն կուսակցութիւններին, որոնց նա ցանկանում է վստահել իր պետական կեանքի վիճակի տնօրինումը և իր ապագան։ Պարլամենտական այդ ընտրութիւնները պիտի դան վերջ տալու մեր պետական կեանքի այն անբնական և անորոշ դրութեանն ու ընթացքին, որի շնորհիւ հայ ժողովրդի կողմից չընտրուած խորհրդի ճնշող մեծամասնութիւնը պատճառեց մեր ժողովրդին բազմաթիւ դժբախտութիւններ, որովհետև անհեռատես էր ու ագրեսիւ և որովհետև իր ձայների մեծամասնութեան շնորհիւ հաստատուն նեցուկ էր քաղաքականութիւն վարող դաշնակցական մինիստրների համար։

Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը մտաւ կառավարութեան կազմի մէջ շնորհիւ այն հանգամանքի, որ դաշնակցականները յանձին վարչապետի և այլոց քանիցս բացարձակօրէն խոստովանել էին մեզ, որ իրենք մենակ չեն կարող կառավարել այս երկիրը, ուր դեռ թագաւորում են սովը ու հիւանդութիւնները, մահն ու անիշխանութիւնը։ Բացի այդ և մենք, որպէս հայ ժողովրդի միջից ծնունդ առած որոշ քաղաքական հոսանք, չէինք կարող մնալ անտարբեր դէպի հայութեան ապրած այս ճակատագրական օրերի տառապանքները և համաձայնութիւն տուինք հաւասար չափով մեզ վրայ վերցնելու Հայաստանի կառավարութեան աշխատանքների ծանրութիւնը, մանաւանդ երբ տեսնում էինք, որ միատարր դաշնակցական կառավարութիւնը տանում է մեր ժողովրդին դէպի կործանում և նորանոր արհաւիրքները, շնորհիւ իր հակաժողովրդական, անհեռատես և յարձակողական քաղաքականութեան։

Եւ անելով այդ քայլը մենք ընտրեցինք երկու չարեաց փոքրագոյնը։

Բայց մասնակցելով կառավարութեան մէջ հաւասար չափով դաշնակցութեան ներկայացուցիչների հետ, պարլամենտում մենք ունէինք միմիայն 6 անդամ, այդպիսով մեր յենարանը պարլամենտում ամենևին չէր համապատասխանում մեր ներկայացուցչութեանը կառավարութեան մէջ։ Եւ այդ էր մեր թոյլ կողմը. այդ թոյլ կողմի շնորհիւ է, որ մեզ անընդհատ քարկոծում են, առանց մտածելու անգամ, որ երբ մենք այդ քայլը արել ենք, այնուամենայնիւ հաւատացած ենք եղել, որ մեր հաւասարաչափ ներկայացուցչութիւնը կառավարութեան մէջ շատ դժբաղդութիւններից կը փրկի ժողովրդին։ Եւ այդ շատ անգամ եղել է։ Բայց, ի հարկէ, հասարակութիւնը և այն էլ ոչ անաչառ հասարակութիւնը, տեսնում է միմիայն վատը և նրա վրայ յարձակւում է, իսկ լաւը երբէք չի ուզում տեսնել։

Կուսակցամոլութեան առաջին նշաններից մէկն է դա, գուցէ և նրանց ամենագլխաւորը։

Ապագայ ընտրովի պարլամենտը նախ և առաջ վերջ կը տայ վերոյիշեալ անբնականութեանը, այսինքն եթէ ընտրութիւնները կատարուեն առանց բռնութիւնների և գեղծումների, նրանք ցոյց կը տան թէ ինչ փոխյարաբերութիւն կայ մեր և միւս կուսակցութիւնների ուժերի և արմատների միջև, ըստ այնմ էլ կը վճռուի ապագայ կառավարութեան կազմը, ըստ այնմ էլ կը պարզուեն ամէն մէկի պատասխանատուութեան իրական սահմանները։

Գիտենք, որ դժուար է երազել, որ հայ ժողովրդին այս անգամ էլ չը խաբեն նրանք, որոնք այդ արդիւնքը իրենց համար արհեստի են վերածել, բայց այնուամենայնիւ կուզէինք հաւատալ, որ հայ ժողովրդի գէթ գիտակից մասսան և լայն խաւերը չեն տայ նորից իրենց քուէն նրանց, որոնց ազգակործան գործունէութեան հետևանքով էր, որ մենք ազգովին ապրեցինք այնքան սոսկալի և այնքան արհաւրալից օրեր։

Ապագայ պարլամենտը նշանակալից է և այն հասարակ պատճառով, որ նրա անդամները կոչուելու են վերջնապէս որոշելու մեր արտաքին և ներքին քաղաքականութեան գիծն ու ընթացքը։ Եւ բոլոր նրանք, որոնք զգում են ներկայիս ողբերգականութիւնը, պիտի մի անգամ ընդ միշտ յետ քաշուեն դաշնակցութիւնից, որովհետև մինչև այսօր նա է վարել մեր «քաղաքականութիւնը»։ («Նոր Կեանք»)

ԵՂԻՇԷ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

Հայ երաժշտական աշխարհի անդաստանից մի փայլուն աստղ ևս չքացաւ։ Արմաւիրում, ինչպէս հաղորդում են լրագիրները, բծաւոր տիֆից մահացել է երաժշտագէտ Եղիշէ Բաղդասարեանը իր ամենակորովի և կեանքի ամենաբեղմնաւոր շրջանում։

Հանգուցեալի հետ առաջին անգամ ես ծանօթացայ 1913 թ. Մոսկուայում, որտեղ նա Լազարեան ճեմարանում վարում էր երաժշտութեան դասատուի պաշտօն։ Նրա անսպառ եռանդը դէպի երաժշտական աշխարհի աշխատանքը՝ երգերի եղանակների ներդաշնակելու յատուկ ձեւն ու օրէնքները, կենդանի օրինակ էր ծառայում շատ երաժիշտների համար և խթան մրցութեան։

Ամբողջապէս նուիրուած լինելով ներդաշնակ երգեցողութեան տարածելու գաղափարին, տենդային աշխատանքով երգեցիկ խմբեր էր կազմակերպում նա Մոսկուայում թէ եկեղեցում և թէ համերգներին երգելու, որով և մեծ ժողովրդականութիւն էր վաստակել։ Իր անօրինակ եռանդով, ինձ թւում էր, որ ամբողջ իր կեանքը դրել էր հայ գեղարուեստի զարգացման գործի վրայ՝ տալով շատ երաժշտական աշխատանքներ, մեներգեր և խմբերգեր, որոնք իսկապէս յիշատակութեան արժանի գործեր են, և ահա այդ ստեղծագործող աշխատանքներն են, որ անջնջելի են թողնում մեր հոգու խորքերում Եղիշէ Բաղդասարեանի վառ անունը։

Հանգուցեալի երաժշտական հանճարը հրաբուխի նման դուրս էր ժայթքում իր միջից այն, ինչ եռում էր նրա անհանգիստ սրտի և հոգու մէջ, կարծես նախազգալով իր անժամանակ մահը. սակայն անողոք մահը երբէք չի կարող մահացնել նրան, որի մէջ հանճարը աւելի հզօր է յաւիտենական, քան ինքը — մահը։

Քանի որ աշխարհումս գոյութիւն կունենան երգ-հնչիւնները, նրա հետ կապրի Եղիշէ Բաղդասարեանը, նա չի մեռնիլ — նա կապրի այն հմայիչ ձայների եթերում, որ մեզ թողել է ժառանգութիւն։

Յաւիտենական հանգիստ և յաւերժ յիշատակ ժողովրդի տաղանդաւոր զաւակի անմեռ հոգուն։

Բուղդան Բերինեան

16 մայիսի

ՄԱՄՈՒԼ

Բագուի «Նաշե Վրեմեա» թերթը, առաջ բերելով շրջող լուրերը, իբրև թէ Գերմանիային առաջարկած հաշտութեան պայմանագրի շնորհիւ ամրանում է յեղափոխական տրամադրութիւնը Անգլիայում, Ֆրանսիայում, Իտալիայում և Ամերիկայում, գրում է.

Մենք գտնում ենք, որ այդպիսի յուզումնալից տրամադրութեան համար փաստալից տուեալներ չկան, որովհետև յաղթական երկրների հնարաւոր յեղափոխութիւնը ոչնչանում է իրական տուեալներով և պատմահոգեբանական պատճառներով, այլ և նրա համար, որ եթէ Գերմանիան, սովամահ լինելու քայլեր անելով չցանկանայ ստորագրել խաղաղարար պայմանագիրը, այդ դէպքումն էլ դրութիւնը չի փոխուի, յաղթող պետութիւնները, որոնք իրենց կամքը թելադրում են Գերմանիային, իրենց ոյժերը ստանում են ոչ թէ նրա խաղաղարար պայմանների ապագայ ստորագրութեան մէջ, այլ իրենց իրական ոյժի մէջ։

Ստորագրութիւնը միայն ձեւական է, առանց որի յաղթական պետութիւններն ընդունակ են թելադրել Գերմանիային իրենց շահերին անհրաժեշտ գիծը.—Եւ մենք կարծում ենք, որ առանց պարենաւորման, նաւատորմիղի, երկաթուղային գոյքի, ցրուած բանակով և մի քանի հարիւր հազար ռազմագերիներով, որոնք գտնւում են Ֆրանսիայում, Գերմանիայում, նա չի կարող չստորագրել պայմանագիրը։ Եւ նա կը ստորագրի հենց միայն նրա համար, որ թեթևացնի իր ներկայ անտանելի տնտեսական դրութիւնը, որից ամենից շուտ նա պէտք է ազատուի։

Լրագիրը համոզուած է, որ

Խաղաղարար պայմանագրի մէջ մտնող ժողովուրդների Լիգայի ինստիտուտը, որպիսին մշակել են Վիլսոնը և Կլեմանսոն, հանդէս կը գայ որպէս անխախտ ժայռ, որի վրայ այս անգամ կը ջարդուեն այն պետութիւնները, որոնք ձգտում կունենան մարդկութեանը խաղաղութիւնը խանգարել—լինի դա Գերմանիան թէ մի ուրիշ երկիր։

Այդ հայեցակէտից չի կարելի չողջունել Վերսալի պայմանագիրը, որպէս դարերի պատմական միջազգային առաջին մի ակտ, որը նպատակ ունի մշտընջենական խաղաղութիւն ձգել ժողովուրդների մէջ։

ԿԱՐԵՒՈՐ ԼՈՒՐԵՐ

Եապոնիայի օգնութիւնը Կոլչակին։

Աւստրիական պատուիրակութիւնը Վերսալում։

Յեղափոխական շարժում Աւղանիստանում։

Լուրեր Հայաստանից։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԱՒԱՐ

ՊԵՏՐՈՎՍԿ։ Կոլչակը Սամարան գրաւելու ժամանակ գրաւուած է ահագին քանակութեամբ շոգենաւեր։ Հաստատւում է այն լուրը, թէ Կոլչակի զօրքի Սամարային մօտենալու ժամանակ այնտեղ ապստամբութիւն է եղել։

ԱՍՏՐԱԽԱՆԻ ՌՄԲԱԿՈԾՈՒԹԻՒՆԸ

ՊԵՏՐՈՎՍԿ. Աստրախանը պաշարող անգլիական նաւատորմիղը մի քանի անգամ ռմբակոծութեան ենթարկեց Աստրախանին կից վայրերը։

ԿՌԻՒՆԵՐԸ ԿԱԶԱՆԿԱՅՈՒՄ

ԵԿԱՏԵՐԻՆՈԴԱՐ, 19 ապրիլ. Խորհրդային գործող բանակը, ցոյց է տալիս, թէ կարմիր զօրքերը տևական բնոյթ ունեցող կռիւներ են վարում Կոլչակի զօրքերի դէմ, որը առաջացել է Կազանկա գետի շրջանը։

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐԸ ՍԻԲԻՐՈՒՄ

ԵԿԱՏԵՐԻՆՈԴԱՐ։ Ամերիկական կառավարութիւնը մի շարք բանկեր է բաց անում Սիբիրի և Հեռաւոր Արևելքի քաղաքներում։

ԱՐՏԱՔԻՆ ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆ ՍԻԲԻՐԻ ՀԱՄԱՐ

ԵԿԱՏԵՐԻՆՈԴԱՐ։ Եապոնիայի կառավարական շրջանների հետ ունեցած բանակցութիւններից յետոյ պարզուեց, որ եապոնական բանկերը համաձայն են տալ Սիբիրին արտաքին փոխառութիւն։

ԲԱՆԱԿՆԵՐԻ ՄԻԱՑՈՒՄԸ

ԼՈՆԴՈՆ։ Արխանգելի զօրքերի խմբերի ամբողջ Կոլչակի բանակի հետ միանալուց յետոյ, Անգլիան հնարաւոր համարեց ուժեղացնել Կոլչակի օգնութիւնը տեխնիկական միջոցներ ուղարկելով Արխանգելսկու վրայով։

ԿԱՐԼ ԿԱՅՍՐԸ

ԵԿԱՏԵՐԻՆՈԴԱՐ։ Աւստրիական կարլ կայսրը թոյլտւութիւն խնդրեց Աւստրիական կառավարութիւնից Ժընևայում բնակուելու համար։

ՃԱՊՈՆԻԱՅԻ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ։ Հաղորդում են, թէ ադմիրալ Կոլչակի Սիբիրի կառավարութեան և Ճապոնիայի միջև արդէն համաձայնութիւն է կայացել։ Ճապոնական զօրքերը արդէն սկսել են պատերազմական գործողութիւններ Կասպից ծովի և հարաւային Ուրալի շրջաններում։ Սիբիրի կառավարութիւնը, Դաշնակիցների համաձայնութեամբ, համաձայնուեց ընդունել Ճապոնիայի օգնութիւնը թէ մարդկանցով և թէ գինամթերքներով։ Դրա փոխարէն Ճապոնիան մի շարք արտօնութիւններ է ստանում Հեռաւոր Արևելքում։

Ադմիրալ Կոլչակի բանակն է գալու ճապոնական մի կորպուս 100,000 սուինաւոր զինուորներով։

ՍԻԲԻՐՈՒՄ

ԵԿԱՏԵՐԻՆՈԴԱՐ։ Սիբիրից եկողները հաղորդում են, թէ այնտեղ անհամեմատ շատ աժան են բոլոր ապրանքները և բերքը, քան մեզ մօտ։ Պորտօ-Ֆրանկոյի շնորհիւ, Սիբիրի և Հեռաւոր Արևելքի ռուս շուկաները լցուած են ամերիկական, առանձնապէս ճապոնական ապրանքներով։ Ահա, օրինակ, մի քանի ապրանքների գները։ Ամերիկական կօշիկները—40—50 ռ., ճապոնական կտաւ—120—150 ռ.։ Շատ աժան է սպիտակ հացը—30 կոպէկ ֆունտը։ Վլադիվոստոկ է բերուած ճապոնական (Ֆորմոզա կղզուց) շատ եղեգնի շաքար, որը արժէ 1 ռ. 20 կ.։ Վլադիվոստոկում բացուել են շատ գործարաններ և զաւոդներ։ Գործում է նաև Սուվորինի լուցկու գործարանը, որ երկար ժամանակ փակուած էր։

ԻՇԽ. ԼՒՈՎԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԳԵՆ. Ա. Ի. ԴԵՆԻԿԻՆԻՆ

Կուբանի քաղաքական շրջաններում, մասնաւորապէս Ռադայում, վերջին օրերս շատ են խօսում Պարիզի ռուսական խաղաղարար պատուիրակութեան նախագահ Լվովի հարաւային Ռուսաստանի զինուած ույժերի գլխաւոր հրամանատար գեն. Ա. Ի. Դենիկինին ուղարկած հեռագրի մասին, խաղաղարար կոնֆերանսի գործերի առթիւ։ Հեռագիրը վերաբերում է Պարիզի ռուսական հարցի սկզբունքային խնդրի որոշմանը, ֆրանսիական կառավարական և քաղաքական շրջանների դէպի Կամաւորական բանակն ունեցած վերաբերմունքի և Եւրոպայի քաղաքական հորիզոնի մասին։

ԳԵՆ. ԴԵՆԻԿԻՆԻ ՃԱՌԸ

ԵԿԱՏԵՐԻՆՈԴԱՐ։ Գեն. Միլնի պատուին տրուած ճաշի ժամանակ գեն. Դենիկինը ճառ ասաց, ուր ի միջի այլոց ասաց հետևեալը.

Ես ուրախ եմ, որ վերածնւող Ռուսաստանի ույժերի և հզօր Անգլիայի միութիւնը իրական փաստ է, որպիսին նորից վկայում է գեն. Միլնը։ Իմ կառավարութեան անունից անկեղծ շնորհակալութիւն եմ յայտնում այն օգնութեան համար, որպիսին տալիս են մեզ անգլիացիք, և բանակի անունից ողջունում եմ մեր բարեկամ Անգլիային՝ յանձին նրա արժանաւոր ներկայացուցիչ գեն. Միլնի և Բրիգսի։

ԷՍՏՈՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆ

ՆՈՎՈՋԵՐԿԱՍԿ։ Դաշնակիցների հաղորդագրութիւնից երևում է, որ Էստոնիան, իր Պարիզի պատուիրակ Բոսկոյի միջոցով յայտնել է Ֆրանսիային, թէ Էստոնիան իրեն անկախ հրատարակելով, կառավարութիւն է կազմել և հրաւիրել է ազգային ժողով։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԶՕՐՔԵՐԻ ՄԵԿՆՈՒՄԸ

Անգլիական զօրամասերը հետզհետէ մեկնում են Թիֆլիսից։ 1914 և 1915 թ. թ. զինուորները ուղևորւում են Անգլիա, իսկ 1916—1917 թ. թ. և 1919 թ.՝ Եգիպտոս։

22-րդ դիվիզիան մեկնում է Անգլիա, իսկ նրանց փոխարէն, մօտիկ ապագայում, Եգիպտոսից գալու է 27-րդ դիվիզիան։

ԱԶԱՏ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՒՍՏՐԻԱՑԻՆԵՐԻ ՀԵՏ

Կլեմանսոն այսօր Գերմանիայից մի քանի հեռագիր ստացաւ, որով պահանջում են, որ գերմանացիներին թոյլ տրուի ազատ խորհրդակցութիւն ունենալ աւստրիացիների հետ։ (Վ. Հ. Գ.)

ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ

Աւստրիական պատուիրակները այսօր երեկոյեան կը ժամանեն Ս. Ժերմէն։ Նրանց ժամանելու համար ամեն ինչ պատրաստուած է, սակայն կարգադրութիւն է արուած չը թոյլ տալ խորհրդակցել գերմանացիների հետ, որոնք մնացել են Վերսալում։ Աւստրիացիներին թոյլ է տրուած ազատ հաղորդակցութիւն ունենալ իրենց կառավարութեան հետ։ (Վ. Հ. Գ.)

ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Խաղաղարար պայմանագիրը կը յանձնուի աւստրիացիներին Ս. Ժերմէնում այնպէս, ինչպէս այդ յանձնուեց գերմանացիներին Վերսալում։ (Վ. Հ. Գ.)

ՊԱՏԵՐԱԶՄ ԱՒՂԱՆԻՍՏԱՆԻ ԴԷՄ

ԲԵԼՈՍՏՐՈՎ, 15 մայիսի։ Ռէյտերի գործակալութիւնը հաղորդում է, որ անգլիացիները պատերազմական գործողութիւններ են սկսել Աւղանիստանի դէմ։ Զօրքերի շարժման մասին տակաւին տեղեկութիւններ չկան։ Յեղափոխական շարժումը Աւղանիստանում աճում է։ Սահմաններում, անգլիացիների դէմ, կանգնած են աւղանական զօրքերն իրենց թնդանօթներով։ (Վ. Հ. Գ.)

ՆՈՎՈՋԵՐԿԱՍԿԻ ՕԴԱՅԻՆ ՌՄԲԱԿՈԾՈՒՄԸ

Ապրիլի 25-ին Նովոչերկասկի վրայ երևացել է բոլշևիկեան աէրօպլան, որ երեք ռումբ է նետել։ Աէրօպլանը գետնից 3000 մետր բարձր էր։ Ռումբերից ոչ ոք և ոչինչ չէ վնասուել։ («Утро Юга»)

ՆԱՆՍԷՆԻ ԱՌԱՋԱՐԿԸ ՄԵՐԺՈՒԱԾ

Սկանդինաւեան թերթերում՝ Դանիայում, Շւեդիայում և Նորւեգիայում բևեռային երկրների հետազօտող հռչակաւոր Ֆրիտիոֆ Նանսէնի նախաձեռնութեամբ մի յանձնաժողով էր կազմուել՝ խորհրդային Ռուսաստանին պարէնաւորման մթերքներ մատակարարելու համար։ Սակայն Դաշնակիցները չեն համաձայնել այդ ծրագրին։ Այս առթիւ Նովոռոսիյսկում ստացուել է հետևեալ հեռագիրը.

«Դաշնակիցները՝ Ռուսաստանին ուտելիք մատակարարելու համար՝ Նանսէնի կազմած ծրագրին համաձայն չեն, որովհետև այդ, նրանց կարծիքով, հաւասար կը լինէր խորհրդային իշխանութեան հաստատութեանը նպաստելուն։ («Утро Юга»)

ՍՈՒԼԹԱՆԸ Կ. ՊՈԼՍՈՒՄՆ Է

Սուլթանի Կ. Պոլսից Փ. Ասիա տեղափոխելու մասին տարածուած բոլոր լուրերն անհիմն են։ Սուլթանն առաջուայ նման ապրում է Կ. Պոլսում և ամեն ուրբաթ օր գնում է մզկիթ աղօթելու։

(«В. К.»)

ԱՅԱ-ՍՈՖԻԱՆ ԴԵՌ ՄԶԿԻԹ Է

Ռուսական մամուլում Այա-Սոֆիա մզկիթը Սուրբ Սոֆիայի տաճարի վերածելու մասին տարածուած լուրերը ճիշտ չեն։ Դրան ապացոյց Այա-Սոֆիայի գմբէթի վրայի կիսալուսինը։

(«В. К.»)

ՎԻԼՀԵԼՄԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ

Բեռլինի լրագրները հաղորդում են, որ գերմանական կառավարութիւնը նախկին կայսրին տարեկան 7 միլիոն մարկ կենսաթոշակ է նշանակել։ Այդ վճիռը կայացաւ այն ժամանակ, երբ Վիլհելմը դիմեց գերմանական կառավարութեանը խնդրագրով, թէ ապրուստի միջոցներ չունի։

(«В. К.»)

ՕԴԵՍՍԱՅԻ ԴՐԱՄԱՆ ՇՈՒՐՋԸ

Կ. Պոլսի քաղաքական շրջաններում հաւատացած են, որ Օդեսսայի յանձնումը տեղի է ունեցել հակառակ Պարիզից ստացուած հրամանների։ Այս համոզմունքը հիմնուած է նրա վրայ, որ Օդեսսայի անձնատուր լինելը Պարիզում «պայթող ռումբի ազդեցութիւն է արել»։

Ասում են, որ գեներալ Ֆրանսէ դ՛Էսպրէն նկատողութիւն է ստացել, թէ ֆրանսիական կառավարութիւնը նրա կարգադրութեանը չէ հաւանում։ Այս առթիւ ֆրանսիական զօրքերը շարժւում են Բեսարաբիայի կողմից։

Առայժմ ասում են, որ Օդեսսայի անկումը տեղի է ունեցել ռազմագիտական և պարէնաւորման պատճառներով, որովհետև Օդեսսայի մթերքներն այնքան քիչ են եղել, որ հազիւ էին բաւականացնում ժողովրդին, ուր մնաց որ կերակրէր և զօրքերին։

(„Великая Россія“)

ԳԵՆԵՐԱԼ ԴԵՆԻԿԻՆԸ ԵՒ ՎՐԱՑԻՆԵՐԸ

„Утро Юга“ թերթը հաղորդում է, որ Կամաւորական բանակի գլխաւոր հրամանատար գեներալ Դենիկինը Ռազմավիրական ճանապարհով անցնելիս պատահել է վրացական սահմանապահ զինուորների, որոնք գլխաւոր հրամանատարի հետ զրուցելով յայտնել են, թէ վրացիները մտադրութիւն չունեն Կամաւորական բանակի հետ կռուելու։ Նրանք միևնոյն ժամանակ գանգատուել են իրենց խղճալի դրութիւնից և խնդրել են, որ իրենց և ընտանիքներին հաց տայ։ Գլխաւոր հրամանատարը հրամայել է այդ վրացիներին անցագիր տալ դէպի Վլադիկաւկազ և հաց բաց թողնել նրանց։

ՏԻՖԸ ԿԱԶԱՆՈՒՄ

Ապրիլի 25-ին [illegible] -ղել են 1100 հոգի [illegible] -յին տիֆով և 1000 բծաւոր տիֆով հիւանդներ։ Հիւանդութիւնը հետզհետէ սաստկանում է։ («Утро Юга»)

ԲՈԼՇԵՒԻԿԱԿԱՆ ԱԳԻՏԱՑԻԱ

Կ. Պոլսից եկողները պատմում են, որ բոլշևիկներն այնտեղ հիմնաւոր բոյն են դրել և մեծ չափերով ագիտացիա են մղում Թիւրքիայի մայրաքաղաքում։

Նաւահանգիստներում հերթապահութիւն են անում յատուկ բոլշևիկների գործակալները, որոնք ծովախոզերի նըման շոգենաւերով ժամանած ռուսական գերիներին գրաւում են իրենց կողմը։

Դեռ ևս շոգենաւն ափին չհասած նրա տախտակամածի վրայ են բարձրանում կասկածելի անհատներ, որոնք գերիներին առաջարկում են ձրի ճաշի և կինեմատոգրաֆի տոմսակներ։ Իսկ երբ նրանք տեղ են հասնում, նրանց դիմաւորում են իսկական ագիտատորներ և գործն առաջ են տանում ըստ կարգին։

Նրանց առաջին զոհերը լինում են այն զինուորները, որոնք գնում են միանալու Կամաւորական բանակին։ Օդեսսայի անկումից յետոյ բոլշևիկեան գործակալներն ուղղակի հեղեղել են Կ. Պոլիսը։

(«В. К.»)

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՎՐԱՑ ՀԵՌԱԳՐԱԿ. ԳՈՐԾ.)

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՂՈՐԴ.

Փոխհատուցման խնդիր

Մեծ պետութիւնների գաղութային նախարարներից կազմուած յանձնաժողովը յանձնառու եղաւ քննել գաղութների փոխհատուցման գործը, որպիսին պէտք է ստանայ Իտալիան Սոմալի շրջանում։

Բրոկդորֆի յայտագրեր

Գերմանիայի տնտեսական դրութիւնը նուաստացնող պայմանների հաստատման և Վիլսոնի սկզբունքների առթիւ Բրոկդորֆը նորից դիմեց Կլեմանսոյին երեք յայտագրով Դաշնակիցների գործողութիւնը և նրանց հայեացքները իմանալու համար։

Դաշնադրութիւնը ոչնչացրած

Ֆրանսիայի և Անգլիայի մէջ բանակցութիւններ են տեղի ունենում Եգիպտոսի և Մարոկոյի դաշնագրութիւնը ոչնչացնելու։

Ձերբակալումներ Ֆինլանդական զօրքի մէջ

ԲԵԼՈՍՏՐՈՎ, 15 մայիսի.—Ֆինլանդական բանակը վերականգնելու առթիւ, ֆինլանդական կառավարութիւնը մասսայական ձերբակալումներ կատարեց իր զօրքերի մէջ։ Ձերբակալութիւնները շարունակւում են։ Քննութեան արդիւնքը պահւում է գաղտնի։

Շէյդեմանի կարծիքը պայմանագրի առթիւ

Նախագահ Շէյդեմանը փակելով նիստը ասաց, որ գերմանական ազգի միահամուռ կարծիքը, համաձայն պառլամենտի ներկայացուցիչների արտայայտութեան,

---

ՍԱԼՄԱՍՏԻ ԱՒԵՐՈՒՄԸ

(Շարունակութիւն)

Մարշիմոնի սպանութիւնը եւ նրա հետեւանքը

Յիշեալ նամակի բովանդակը պարսիկ ազգայնականութեան դիրքը դէպի հայերը միանգամայն փոխեց։ Նրանք կասկածելով, թէ մի գուցէ հայերի զինուելն իրենց դէմ է ուղղուած, իրենք ևս սկսեցին զինուել, և զինուելու էլ ամեն հնարաւորութիւն կար, քանի որ ռուսական յաղթական զօրքն այնքան ռազմամթերք էր թողել, որ ոչ թէ Սալմաստի, այլ ամբողջ Պարսկաստանի ազգաբնակութեանը կը բաւէր։ Պարսիկներն սկսեցին տենդային արագութեամբ զինուել և այն էլ ոչ թէ գաղտնի, այլ աշկարայ, օրը ցերեկով, ամենքի աչքի առաջ։ Այս գործողութիւնը երբեմն կոմիքական կերպարանք էր ստանում. օրինակ՝ պարսիկները խանութում կախում էին իրենց ունեցած բոլոր հրացանները և երբ հարցնող էր լինում, թէ քանի՞ արժէ հրացանը, նրանց պատասխանում էին, թէ հրացանները ծախու չեն, այլ կախ են տրուած յանկարծակի պատահարների դէմ կռուելու համար։

Քուրդ ազգաբնակութիւնը զինուելու ոչ մի կարիք չունէր, որովհետև դեռ ևս միապետութեան օրերում ռուսները նրանց լաւ զինել էին, ցանկանալով նրանցից մի պատուար կազմել տաճիկների դէմ, չնայելով նրան, որ քրդերը շատ անգամ առաջած զէնքերն ուղղել էին հենց իրենց զինողների դէմ։

Ատրպատականի ազգերից ամենից լաւ պայմանների մէջ էին գտնւում ասորիները։ Սրանք 1915 թուին Ջուլամերիկից գաղթել էին Պարսկաստան և բռնել էին Ուրմիայի և Սալմաստի շրջանների մի մասը։

Դեռ ևս ռուսական զօրքն Ատրպատականից դուրս չեկած՝ ասորիներն ռուսական սպաների ղեկավարութեամբ սկսեցին զինուել և պատրաստուել։ Նրանք կազմեցին չորս բատալիոն։

Ասորիների կազմակերպման գործն իր ձեռքն էր առել անգլիական կառավարութեան ագենտ Ծաւջըր։

Ասորական բատալիոնների մէջ ապաստան էին գտել Կովկասից արտաքսուած միապետական գործիչները, օրինակ՝ Թիֆլիսի պահնորդական բաժանմունքի պետ Պասարիլկինը, Թիֆլիսի ոստիկանապետ Ջղանովսկին և դրանց նըման ուրիշ շատերը։

Պարսից կառավարութիւնը, պարզ բան է, որ չէր կարող հաշտ աչքով նայել մի այսպիսի սպառնալից ույժի գոյութեանը, որ բուն էր դրել իր սեփական հողի վրայ, մանաւանդ որ ասորիները թռուցիկներով յայտարարեցին, թէ Ուրմիան իր շրջականներով ապագայ Ասորեստանի մասն է կազմում և իրենց այդ շրջանում պահում էին որպէս տիրապետող ազգ։

Պարսից կառավարութիւնն զգալով, որ ասորական բատալիոններն իր գլխին մի պատուհաս են դառնալու և մի օր փորձանք են բերելու, աճապարեց դիմել Մարշիմոնին և նրան հասկացրեց, որ ասորիները պարսկական հողում հանդիսանում են որպէս հիւրեր և իրաւունք չունեն զինուել և զինուորական կազմակերպութիւն ունենալ։ Սակայն Մարշիմոնի փոխարէն պարսից կառավարութեանը պատասխանեց անգլիական հիւպատոսը, յայտարարելով, թէ ասորական բատալիոնները անգլիական զօրքի մասն են կազմում և գտնւում են անգլիական կառավարութեան հովանաւորութեան ներքոյ։

Չնայելով այս պատասխանին, պարսից կառավարութիւնը չէր կարողանում հաշտուել ասորական բատալիոնների ներկայութեան հետ և ամեն կերպ առիթ էր փնտռում նրանց հետ ընդհարուելու՝ ույժերը չափելու համար։ Առիթը շուտով ներկայացաւ։

Մի անգամ, երբ ասորական զօրքերը զէնք էին տեղափոխում, պարսիկները նախօրօք դարան մըտած՝ յարձակւում են նրանց վրայ և բաւական մարդիկ կոտորում նրանցից։ Միաժամանակ Ուրմի քաղաքում պարսկական զօրքը յարձակւում է ասորական զօրքի վրայ, ցանկանալով նրանից խլել զէնքի պահեստը. սակայն խարդաւանքն անյաջողութեան է հանդիպում, պարսիկները լաւ ջարդւում են, յետ են քաշւում քաղաքից, տալով մի քանի հազար զոհ։

Մինչ Ուրմիայի շրջանում այսպիսի արիւնհեղութիւն էր տեղի ունենում, Սալմաստի շրջանում հայերի և պարսիկների յարաբերութիւնը շարունակում էր մնալ առաջուայ նման խաղաղ և նրանց մէջ թշնամական ոչ մի վերաբերմունք չէր նկատւում։ Պարսիկները յայտարարեցին, թէ նրանք հայերի հետ ոչ մի հաշիւ չունեն, նրանք իրենց այլադաւան (զինակից) եղբայրներն են, ուստի եղբայրական յարաբերութիւնները չխախտելու համար խնդրում են, որ հայերը չխառնուեն ասորիների դէմ վարած կռուին, որի փոխարէն նրանք հայերին խոստանում էին ամեն վտանգից նրանց ազատել։

Ուրմիայի պարտութիւնը վիրաւորել էր ողջ Ատրպատականի մուսուլման ազգաբնակութեան կրօնական և ազգային արժանապատւութիւնը։ Թուրքերն արդէն իրենց անզօր էին զգում զսպելու մի այդպիսի զօրեղ կազմակերպութիւն, ուստի իրենց հայեացքներն ուղղում են հռչակաւոր աւազակապետ Սմկոյի վրայ, այն Սմկոյի՝ որ իր կեանքում հազարաւոր Թուրքերի թալանել ու սպանել էր։ Թուրքերը պատրաստ էին մոռանալու այդ անպատւութիւնը, միայն թէ նա քինախնդիր լինէր Ուրմիայի անպատւութեան համար։

Սմկոն սկզբում հրաժարւում է ասորիների հետ ընդհարուելուց, վախենալով, թէ մի գուցէ նրանց պաշտպանեն հաւատակից հայերը, բայց երբ նրան մեծաքանակ ոսկի են ուղարկում, այն ժամանակ նա մտքում դնում է դաւադրութիւն սարքել Մարշիմոնի կեանքի դէմ, որոշելով նախապէս հայերի հետ դաշն կապել, որպէսզի գործ ունենայ միմիայն ասորիների հետ։ Այդ նպատակով նա անցեալ տարւի բարեկենդանի հինգշաբթի օրը իր մօտ է հրաւիրում հայ ազգաբնակութեան ներկայացուցիչներին խորհրդակցելու Քոհնա-շհար (Հին քաղաք) քաղաքում։

Հայերն ընդունում են հրաւէրը։ Սամսոն խանն իր բոլոր ենթակամիտէններով և Սալմաստի հայ ձիաւորներով ճանապարհ է ընկնում դէպի նշանակուած վայրը։

Հենց այդ տեսակցութեան օրը Սալմաստ է ժամանում Մարշիմոնը 1500 զինուորներով։

Մինչ հայ ներկայացուցիչները պատրաստւում էին ճանապարհ ընկնելու Քոհնա-շհար, Սմկոն մարդ է ուղարկում և խնդրում, որ տեսակցութիւնը մի քանի օրով յետաձգուի։

Երկու օր յետոյ, բարեկենդանի շաբաթ օրը, Սմկոն տեսակցութեան է հրաւիրում Մարշիմոնին, խնդրելով, որ նա իր հետ ոչ մի հայ չըտանէ։

Մարշիմոնը գնում է Սմկոյի մօտ նշանաւոր մելիքների ու ընտիր զինուորների ուղեկցութեամբ։ Սմկոն նրանց հիւրասիրում է թէյով և երբ Մարշիմոնը նրա ձեռքը սեղմելով հրաժեշտ է տալիս, Սմկոն նախօրօք պայմանաւորուած ազդանշանն է տալիս, ատրճանակը կրակելով, որից յետոյ գիւղերում թաղնուած հետեւեալն է.—առաջարկած խաղաղութիւնը հանդէս է գալիս որպէս իսկական ռազմականութեան, ատելութեան եւ վրէժխնդրութեան արգասիք եւ ոչ-քրիստոնէական ոգու խաղաղութիւն։

Երէք յայտագիր

Գրաֆ Ռանցաուն յայտնեց Վերսալի գերմանական պատուիրակներին երեք յուշագրի բովանդակութիւնը, որոնք մայիսի 13-ին ուղարկուած էին Կլեմանսոյին։ Առաջինը վերաբերում է ազգերի դաշնակցութեան Գերմանիայից անջատելու բողոքին, երկրորդը՝ փոխհատուցման եւ պահանջներին, որով խնդրում են պատերազմի նախակիրը երկրներին եւ յանցաւորներին յանձնել գերմանական պատուիրակներին։ Երրորդը պարունակում է իր մէջ գերմանական տնտեսական յանձնաժողովի զեկուցումը, ուր ընդգծւում է այն, որ ով կը ստորագրէ միլիոնաւոր գերմանացիների մահուան դատավճիռը։ Նախ քան յայտագրերի ընթերցումը գրաֆ Ռանցաուն ասաց, որ խաղաղութիւնն անընդունելի է։ Այդ հանգամանքներում գրաֆ Ռանցաուի կարծիքը համաձայն է մինիստր-նախագահ Շէյդեմանի կարծիքին։ Նա վերջացրեց իր ճառը հետեւեալ խօսքերով.—«Գործը նրանում չէ, որպէսզի կարելի լինի առել այս կամ ոչ, այլ նրանումն է, որ բանակցութեան ժամանակ հաստատել մեր հակառակորդների առաջ, թէ սպասելի է, որ ոչ մի ազնիւ մարդ՝ չի ստորագրի խաղաղութիւնը, հաւատացած լինելով, որ դա անիրագործելի է։

ԲՈԼՇԵՒԻԿԱԿԱՆ ՀԱՂՈՐԴ.

Դաշնակիցների նաւատորմիղը Սեւ ծովում

ՕԴԵՍՍԱ, 10 մայիսի.—Դաշնակիցների նաւերը հեռացան դէպի ծով եւ գտնւում են Բերեզանից 10 վերստ հեռու Օչակովի մօտ չմտնելով ոչ մի նաւ։ Ֆրանսիացիների կողմից Օչակովի ռմբակոծութիւնը չէ հաստատւում։

Օտարերկրացիների պաշտպանութիւնը

ՕԴԵՍՍԱ, 13 մայիսի.—Գործադիր կոմիտէի պրեզիդիումին այցելեցին Շուեդիայի, Նիդերլանդի, Դանիայի Շուէյցարիայի, Պարսկական եւ Վրաստանի դեսպանները. բոլոր դեսպանների կողմից Վրաստանի դեսպանը ասաց, որ բոլոր դեսպանների մեկնելուց յետոյ նրանց օտարահպատակների պաշտպանութիւնը յանձնւում են գործադիր կոմիտէին, ինչպէս իշխանութեան ներկայացուցչի։

ՄՈՍԿՈՒԱ, 15 մայիսի,—Հիւսիսային Ռուսիայի տեղական իշխանութիւնները յայտնել են ռուս կառավարութեանը, թէ անգլօ-ֆրանսիական զինուորական իշխանութիւնների կարգադրութեամբ Մուրմանի շրջանից առանձնակ հազարաւոր բնակիչներին աքսորում, որոնց մէջ կանանց եւ երեխաների, դէպի սահմանագիծը՝ նրանց դէպի խորհրդային իշխանութիւնն ունեցած համակրութեան եւ նրա օտարների դէմ ունեցած ատելութեան համար, որոնք սիրել են իրենց երկիրը եւ իւրեանց յեղափոխութեան միջոցով ձեռք բերուած ազատութիւնը։

Յունական զօրքերը Զմիւռնիայում

Յունական զօրքի մի ամբողջ դիվիզիա, իրենց թնդանօթներով միասին է չորեքշաբթի օր իջել Զմիւռնիայում։

Բոլշեւիզմը Գերմանիայում

Գերմանիայում չարերը ձգտում են վերականգնել բոլշեւիկ տրամադրութիւն, որին համակրութիւն են ցոյց տալիս մի քանի երկիրներ։

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Հայաստանի անկախութեան տարեդարձը. —Երեւանից ստացանք հետեւեալ հեռագիրը՝ «Հայաստանի Կառավարութիւնը որոշել է մայիսի 28-ին տօնել ամբողջ հանրապետութեան մէջ Հայաստանի անկախութեան տարեդարձը, որի համար ընտրուել է միջմինիստրական յատուկ յանձնաժողով։ Յանձնաժողովի նախագահն է մինիստր Մելիք-Ղարագեօզեան։

◆ **Գիւղացիների յանձնաժողովի որոշումներից.** Գիւղացիական յանձնաժողովը իր վերջին նիստում նկատի առնելով այն հանգամանքը, որ անդամներից մի քանիսը զբաղուած են պետական այլ եւ այլ գործերով, որոշեց նախագահութեան վերընտրութիւն կատարել։ Նոյն ժողովը քննութեան առաւ նաեւ Ախալցխայի եւ Ախալքալաքի գաւառների դրութիւնը եւ պարզուեց, որ այնտեղ շատ տարածուած են գողութիւնը, աւազակութիւնը. ժողովուրդը անկազմակերպ դրութեան մէջ է եւ նիւթապէս անապահով։ Որոշուեց կառավարութեան ուշադրութիւնը դրաւել այդ հանգամանքի վրայ եւ ուղարկել պրոպագանդիստներ, խնդրել ժողովրդական գուարդիային բանալ այնտեղ իր բաժանմունքը ազգաբնակութեան անդորրութեանը հսկելու համար։ Ապա զեկուցուեց Բորչալուի գաւառի դրութեան մասին, եւ որոշուեց նոյն բարենորոգութիւնները կատարել նաեւ այնտեղ։

◆ **Իտալական զօրքեր Անդրկովկասի համար.**—Հայրենիք մեկնող անգլիական զօրքերի փոխարէն առաջիկայ ամսին Անդրկովկաս են գալու իտալական զօրքեր։

◆ **100,000 ռ. մայիսի 26-ի տօնի համար.**—Մայիսի 26-ի տօնի ծախսերը հոգալու համար Վրաստանի Սահմանադիր Ժողովը գեղարուեստական յանձնաժողովի տրամադրութեան է յանձնել 100,000 ռուբլի։

◆ **Սակագնի վրայ հսկող յանձնախումբ.**— Քաղաքային դումայի որոշման համաձայն, կազմուել է հսկիչներից եւ միլիցիայից բաղկացած մի մարմին՝ հետեւելու, որ շուկայում մթերքները սակագնով ծախուեն, քաղաքացիները առեւտուր պէտք է կատարեն սակագնի համաձայն եւ եթէ որեւէ զեղծում տեսնեն, պէտք է անյապաղ տեղեկացնեն այդ մասին քաղաքագլխին կամ քաղաքային վարչութեան անդամ Կ. Ա. Պանիեւին։

◆ **Ժող. լուսաւորութեան մինիստրութեան մէջ.**—Վրաստանի ժող. լուսաւորութեան մինիստրութեան կից կազմուել է մի յանձնաժողով, որ մինչեւ յունիսի 15-ը ծրագիր է մշակելու լեզուների եւ բնագիտական ու մաթեմատիքական առարկաների դասաւանդման մասին։

— Ժող. լուսաւորութեան մինիստրութեան կազմակերպած վերաքննութիւնը, որ կատարել է 4-րդ արական գիմնազիայի վերատեսուչ Ջալովը, վերջացել է, հետեւանքների մասին զեկուցուել է մինիստրութեանը։

◆ **Լրագրի հասը 2 ռուբլի.**—Թղթի եւ տպագրական նիւթերի թանգութեան պատճառով այսօրուանից «Грузія» եւ «Кавказское Слово» թերթերի հատավաճառը 1 ռ. 50 կոպէկից բարձրանալու է 2 ռուբ., իսկ մի ամսուայ բաժնեգինը՝ 25 ռուբլուց 40 ռ.։

◆ **Վրացերէն դասագրեր.**— Վրաստանում դպրոցական դասագրքերի բարգաւաճման գործը հետզհետէ առաջադիմում է։ Քութայիսում Մթարիշվիլին հրատարակել է Թիֆլիսի 4-րդ գիմնազիայի տեսուչ եւ վաստակաւոր մանկավարժ Մ. Կ. Ջալովի կազմած վրացերէն մի շարք դասագրքերը բնախօսական եւ մաթեմատիքական նիւթերին վերաբերեալ։

◆ **Ղիփշիձէի մահը.**—Մի քանի օր առաջ իր հայրենի Թիոնեթի գիւղում վախճանուել է պրիւատ-դոցենտ Ղիփշիձէն։

◆ **Գողութիւններ.**—Մայիսի 15-ին Օբշչեստվեննայա փողոցում Ս. Տէր-Յարութիւնեանի բնակարանից անյայտ չարագործները պատուհանը կոտրելով տարել են 3800 ռ. արժողութեամբ զանազան թանգագին իրեր։

— Թիֆլիսի բանտային տեսուչը յայտնել է միլիցիային, որ անյայտ չարագործները դիւանատան պահարանից տարել են 2350 ռ.։ Կասկածով ձերբակալուել է սուրհանդակ Սիմոն Լազարաշվիլին։

◆ **Ուղղումն.**—Երէկուայ մեր թերթում զետեղուած «Հաշտութեան պայմանագրի շուրջը» վերնագրով յօդուածի տակ սխալմամբ բաց է թողնուած յօդուածագրի ստորագրութիւնը՝ (անուան սկզբնատառերը). «Գ. Դ.»

ԱՅՍՕՐ

Հայ Ուսանող-Աշակերտական Ընկերութիւնը Կրուժոկի թատրոնում տալու է իր երկրորդ ներկայացումը. բեմադրուելու է Օստրովսկու յայտնի դրաման՝ «Արդիւնաւոր պաշտօն» եւ Տէր-Գրիգորեանի «Վայրենի» վոդեւիլը։

◆ Առաւօտեան ժամը 11-ին, Կովկասի Հայոց Բարեգործ. Ընկերութ. ընթերցարանի դահլիճում կը կայանայ Գանձակեցիների Հայրենակցական Միութեան ընդհանուր ժողով։

ԹԻՖԼԻՍԻ ԲՈՐՍԱՆ

17 մայիսի

Այսօր դարձեալ նկատւում էր ռուս վալիւտայի պահանջ։

«Նիկոլայեւսկի» 100 ռուբլիանոցներին վճարում էին 285 ռուբլի հների համար, 300 ռուբլի նորերի եւ մինչեւ 310 ռ. կապոցների մէջ։ 500 ռուբլիանոցները շրջանառութիւն ունէին 1200 ռուբլուց սկսած մինչեւ 1450 ռուբլի, նայած նրանց նորութեան։ Մանր կուպիւրներին վճարում էին 60—65 տոկոս յաւելում։ «Կերենսկի» 1000 ռուբլիանոցները ծախւում էին մինչեւ 1500 ռուբլի նորերը, իսկ հները շրջանառութիւն ունեն 1200 ռուբլուց սկսած։ 250 ռուբլիանոցներին վճարում էին մինչեւ 25 տոկոս յաւելում։ 40 եւ 20 ռուբ. 12—13 տոկոս յաւելում։

Անգլիական վալիւտան ամուր է։ Շատ են բարձրացել բանկնոտները, որոնց գինը հասել է մինչեւ 230 ռուբլի, չեկերը ծախւում են մօտ 200 ռուբլի։

Տաճկական ոսկի լիրաները շրջանառութիւն ունէին մինչեւ 325 ռուբլի, իսկ թղթի լիրաները՝ 53—55 ռ.։

Տոկոսաբեր արժէթղթերից կարելի է մատնանշել 4 տոկոսաբեր ռէնտան՝ 23 ռուբլի, ազատութեան փոխառութիւնը՝ 60—65 ռուբլի։ Թիֆլիսի Քաղաքային Վարկային ընկերութեան օբլիգացիաները 102—105 ռ.։

Փողի պակասութեան պատճառով չեկերի փոխանակութեան համար պահանջում են մինչեւ 26 տոկոս։

ՅՕԳՈՒՏ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ

Ստացուած է՝

Հայաստանի սովեալների օգտին Ս. Մինաս եկեղեցու երէցփոխ Գ. Ապրեսեանի միջոցով, Զատկական ճրագալոյց երեկոյեան Մ. քահ. Երզնկեանի առաջարկութեամբ ազօթաւոր հասարակութիւնից՝ ժողոված երկու հարիւր մէկ ռ. 5 կ.։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ

Մայիսի 9-ին Ալէքսանդրապոլից Թիֆլիս ժամանեց արժանապատիւ Ղեւոնդ ք. Մանուչեանը։ Շտապում եմ արժանապատիւ հօր մօտ մի քանի տեղեկութիւններ ստանալ, որ ինձ համար անչափ հետաքրքրական է։ Նա պատմեց հետեւեալը. «Մեր Ալէքսանդրապոլի գաւառի գիւղացութեան մեծ մասը, բայց խիստ չքաւորներից, բոլորը ցանք արին, սերմացուն ցորեն, գարի, կտաւհատ։ Նոյնպէս պատրաստւում են ցանել գետնախնձոր։ Մօտ 50—60 գիւղեր, որոնք մօտ անցեալում Թիւրքիայի տիրապետութեան օրով իրենց գիւղերում մնացին՝ չգաղթեցին, այդպիսի գիւղերն աւելի շատ ցանք արին։ Անցեալ տարուայ այն ցանուած արտերը, որ թուրքերը չէին կարողացել իր ժամանակին հնձել, շատ հասունանալուց յետոյ, հասկերից թափուել են հացահատիկները մայր հողի մէջ. այդպիսի արտերը այս տարի բուսել են եւ մեծ յոյս կայ, որ այդպիսի արտերից եւս հաց պէտք է ստանայ մեր գիւղացին։ Գաղթի բոլոր վայրերից վերադառնում են. թէ քաղաքում եւ թէ գաւառում սկսել է փոքր ինչ կենդանութիւն ժողովրդի մէջ։ Ամերիկեան Կոմիտէն ստանում կերպով ալ ու ձաւ [illegible] ժողովրդին օգնութիւն է ցոյց տալիս, չքաւորներին ձրի [illegible] հաց, բրինձ, [illegible] միջոց ունեցողներին [illegible] նոյն [illegible] շատ էժան գներով։ Միսը, իւղը, ձուն, պանիրը՝ համեմատած Թիֆլիսի գների հետ, մեզանում էժան է։ Ոչ մի դպրոցի պարապմունքները երբէք չի ընդհատուել. եկեղեցիները եւս կանգուն են եւ շարունակ ժամատացութիւն է եղել։ Հոգեւոր կառավարութեան յաջորդն է բարձ. Արտակ վարդապետը, որ ներկայումս գտնւում է մեր քաղաքում եւ վարում է վիճակի հոգեւոր գործերը։ Մեծ յոյս կայ, որ գաւառում եւ թէ քաղաքում շուտով վերականգնուի առօրեայ կեանքը. զգացւում է հացի պակասութիւն. քաղաքում առեւտրական կեանքը սկսել է»։

Առաքէլ Բ. Բլրցեան

ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՐԵՒԱՆ

Ամիս 3-ի գիշերը, ժամը 1-ին, կայարանից տուն վերադարձող մօտ 15—16 ճանապարհորդների վրայ են յարձակւում աւազակները եւ կողոպտում ճանապարհորդների ամբողջ իրերն ու դրամը։

◆ Շուշուց դէպի Գորիս տանող ճանապարհի վրայ, Ջաբուղի ձորում, սպանուած են եօթ հայեր։ Անգլիական հրամանատարութիւնը պահանջեց գեներալ նահանգապետ Սուլթանովից, շտապ միջոցներ ձեռնարկել աւազակներին բռնելու։ Այդ նպատակի համար Սուլթանովը խոստացաւ զօրամաս ուղարկել։

◆ Դեղորայքի գները բարձր լինելու պատճառով, բժշկա-սանիտարական վարչութիւնը ժամանակաւոր սակագին է հրատարակել Հայաստանի հանրապետութեան դեղատների համար։

◆ Խնամատարութեան եւ աշխատանքի մինիստրութեան հայթայթիչ բաժանմունքին ենթակայ Երեւան քաղաքում գտնուող բոլոր հաստատութիւնները իրենց գրասենեակներով, մայիսի 7-ից յանձնւում են քաղաքային ինքնավարութեան։ Պաշտօնազուրկ են լինում նոյն օրուանից այդ բաժանմունքում ծառայող բոլոր պաշտօնեաները։

◆ Ապրիլի 29-ի առաւօտեան ժամը 8-ին Էյլարից մի վերստ հեռաւորութեան վրայ հինգ անյայտ չարագործներ յարձակւում են դարաչիչակցի վաճառականներ՝ Գաբրիէլ Մուրադեանցի, Կարապետ Բալոյեանցի եւ Իշխանցի Իսաբէկի վրայ։ Առաջինից տարել են 28,000 ռուբլի, երկրորդից 30,000 ռ։ երրորդից 5600 ռ., մի ժամացոյց եւ բրաունինգ ատրճանակը. չարագործները հետապնդւում են։

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ

Պարլամենտական ընտրութիւնների համար Ալէքսանդրապոլում արդէն սկսել են ցուցակագրութիւնները. հիմա ընդունուած է քաղաքային ընտրութիւնների համար պատրաստուած ցուցակները։ Մայիսի 12-ից մինչեւ յունիսի 11-ը ամեն քաղաքացի կարող է ստուգել, թէ իր անունը մտցրուած է թէ չէ ցուցակի մէջ։

◆ Երկու շաբաթից աւելի է, ինչ Ալէքսանդրապոլ են եկել գեն. Անդրանիկի զօրաբանակի զինուորները—մօտ 200 հոգի։ Ամերիկեան կոմիտէն ծրագրել է նրանց համար ժամանակաւոր աշխատանքներ ստեղծել—քաղաքի փողոցները մաքրել եւ այլն։ Քաղաքագլուխ Լ. Սարգսեանը մի երկու անգամ հեռագրել է Ղարսի նահանգապետին՝ Սարիղամիշ—Ղարաուրղանի ուղղութեամբ նրանց աշխատանքներ տալու։

◆ «Նաբատ»-ը այժմեանից լոյս է տեսնելու կիրակի օրերը՝ հայերէն ու ռուսերէն լեզուներով, խմբագրութեամբ Цезарь Наль-ի, վերանորոգուած կազմով։ «Նաբատ»-ի № 7 լոյս կը տեսնի կիրակի, մայիսի 18-ին։ Գինը 2 ռուբ.։

◆ Վերջին օրերս յաճախակի շուրջկալներ են տեղի ունենում. ձերբակալւում են զինուորահասակ երիտասարդներին, որոնց եւ տանում են բերդապահպան աշխատանքների։

◆ Մայիսի 15-ին գաւառ. կոմիսարի մօտ կայացել է խորհրդակցութիւն՝ մայիսի 28-ին Հայաստանի անկախութեան տարեդարձի տօնակատարումը կազմակերպելու համար։

ՎՐԱՍՏԱՆ

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԲԻՒՋԷ

Մայիսի 17-ին կառավարութեան նիստում պէտք է քննուի ֆինանսների նախարարի կազմած հանրապետութեան 1919—20 թ. բիւջէն։

Կառավարութեան մայիսի 18-ի նիստում որոշուած է հաւանութիւն տալ Սահմանադիր Ժողով մտցնելու՝ ներքին գործերի նախարարի կազմած կենդանիների անկման դէմ միջոցներ ձեռք առնելու մասին զեկուցումը։

Թիֆլիսի քաղաքային միլիցիայի կազմած քննութեան հետեւանքները ընդունել ի տեղեկութիւն եւ քննիչ յանձնաժողովի բոլոր նիւթերը յանձնել ներքին գործերի նախարարութեանը ղեկավարուելու համար։

ԿՌԻՒ ՍՊԵԿՈՒԼԵԱՆՏՆԵՐԻ ԴԷՄ

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը որոշել է հնարաւոր չափով կռուել սպեկուլեացիայի դէմ, գոնէ կենսական անհրաժեշտ մթերքների համար։

Այդ նպատակով կազմակերպուած է առեւտրի վերատեսուչների եւ միլիցիայի յուսալից կազմ, որոնց խիստ կերպով հրամայուած է հսկել սակագնի վրայ։

Քաղաքացիների պարտքն է ամեն տեղ պահանջել, որ միսը, պանիրը, լոբին, ձուկը, ձուն, կարագը եւ այլը վաճառուեն սակագնով. եթէ հակառակութիւն պատահի, թող դիմեն առեւտրի վերատեսուչներին եւ միլիցիային։ Եթէ դրանք չեն կատարի քաղաքացիների պահանջը, թող այդ մասին յայտնեն մեզ կամ քաղաքային վարչութեան անդամ Կ. Ա. Փանիէվին։ Քաղաքային վարչութեան հեռախօսի №-ը 9—28, բնակարանինը—17—64։

Քաղաքային վարչութիւնը իր ցանկալի նպատակին կը հասնի այն դէպքում, եթէ քաղաքացիները կօգնեն նրան, որի համար եւ խնդրում եմ բոլորին։

Թիֆլիսի քաղաքագլուխ

ՎՐԱՑ ԹԵՐԹԵՐԻՑ

ԹԱՆԳՈՒԹԻՒՆ

Վրաց սոցիալ-դեմոկրատների օրգան «Էրթոբա» թերթը հետեւեալ առաջնորդող յօդուածն է նուիրել թանգութեան հարցին.

«Թանգութիւնը սարսափելի ցաւ է, որ մեր գոյութեան վտանգ է սպառնում, մանաւանդ հարկաւո-

---

քրդերը սկսում են կրակել Մարշիմոնի եւ նրան ուղեկցողների վրայ։ Սպանւում են Մարշիմոնը եւ 130 նշանաւոր տոհմապետ մելիքներ ու զինուորներ։

Սմկոյի այդ խարդախ, ամօթալի վարմունքը միանգամայն հակասում է քրդական ցեղապետների աւանդական ասպետական մեծահոգութեանը, որովհետեւ մինչեւ այժմ չէ տեսնուած, որ քուրդը իր հիւրին իր յարկի տակ սպանէ։ Դաւաճանութեան այդ գիծը յատուկ է միմիայն չիա դաւանութեան պատկանող մահմեդականներին եւ ոչ թէ ազատ լեռների զաւակին։ Բայց Սմկոն այս եղեռնը կատարելով ենթարկուած է եղել Սալմաստի թուրքերի ազդեցութեանը։

Մարշիմոնի սպանութիւնը կայծակի արագութեամբ տարածուեց Սալմաստի գիւղերում։ Բոլորն էլ յուզուեցին այս սոսկալի եւ խարդախ արարմունքից։

Մինչ բոլորն այսպէս յուզուած էին, նոյն օրը երեկոյեան ժամի 5-ին յանկարծ թնդանօթն սկսեց որոտալ Քեօհնա-շհարի վրայ, ուր բոյն էր դրել ամարդի թշնամին։ Երկու օր տեւեց այս կռիւը, որ վերջացաւ Քեօհնա-շհարի գրաւմամբ, որ ասորիներն արեցին։

Դժբախտաբար ասորիներին չէ յաջողւում բռնել գլխաւոր աւազակին, Սմկոյին, որ իր գործը կատարելով, հեռանում է Ճարա, ուր թաքչում է լեռների կատարներին։

Քեօհնա-շհարի աւերումը շատ լաւ հետեւանք է ունենում Սալմաստի համար։ Դրանից յետոյ հայերի ու ասորիների յարաբերութիւններն ընդհատւում են, չնայելով նրան, որ հայերը Քեօհնա-շհարի դէպքին չէին մասնակցել։

Մարշիմոնի սպանութեան լուրն Ուրմի հասնելով՝ ազդում է տեղական թուրքերին, որոնք կարծելով, թէ ասորիներն այժմ անպաշտպան են թողել, յարձակւում են նրանց վրայ։ Սակայն զղջացած ջէլոները այնպիսի կատաղութեամբ են յարձակւում թուրքերի վրայ, որ ամբողջ Ուրմի շրջանում համարեա բոլոր թուրքական գիւղերը հիմնայատակ են անում եւ դրանով վրէժխնդիր լինում իրենց կրօնապետի մահուան համար։

Մարշիմոնի սպանութիւնից եւ Ուրմիայի յաղթութիւնից յետոյ ասորական բանակը Պետրոս-աղայի առաջնորդութեամբ 2 թնդանօթով Սոմայի վրայով ուղեւորուեց Ճարա՝ Սմկոյից վրէժ լուծելու համար։

Չնայելով նրան, որ սարերը դեռ եւս ձիւնով էին ծածկուած, բայց այդ հանգամանքը խոչընդոտ չէր հանդիսանում կատաղած ջէլոների արշաւանքին։ Նրանք թափուեցին Ճարայի գիւղերի վրայ եւ ոչնչացրեցին քրդական գիւղերը։

Քանի որ կռիւը տեղի էր ունենում գիւղերում, ասորիների գործը յաջող էր ընթանում, սակայն երբ նրանք հասան Ճարա բերդին, նոյնպիսի լուրջ դժուարութիւնների հանդիպեցին, որ եթէ հայերն օգնութեան չգնային, այն ժամանակ հետեւանքը գուցէ շատ ծանր լինէր ասորիների համար։

Երկու օր տեւող յամառ կռուից յետոյ Սմկոն յաղթւում է եւ փախչում, թշնամու ձեռքը թողնելով իր ամբողջ հարստութիւնը։

Այս կռուին քրդերին օգնութեան են գալիս Մակուից եւ Խոյից։

Սմկոյի փախչելուց յետոյ նրա եւ քրդերի ամբողջ հարստութիւնը մասամբ կողոպտուեց եւ մասամբ էլ կրակի մատնուեց։

Քաղաքական շարժառիթներն ինձ թոյլ չեն տալիս արձանագրելու մի քանի հարուստ եւ նոյնիսկ կուսակցական յայտնի ենթակոմիտէների անունները, որոնք այն աստիճան ստորացան, որ թոյլ տուեցին խառնուել հասարակ խուժանի հետ եւ մասնակցել քրդական եւ այլ գիւղերի ալան-թալանին։

Ճարայի աւազակաբոյնը ոչնչացնելուց յետոյ Պետրոս աղան մտադրուեց արշաւել դէպի Խոյ, վերցնել այն, այնտեղ զինուորական պահակ հաստատել եւ վերականգնել Կովկասի հետ հաղորդակցութիւնը, որովհետեւ 3—4 ամիս էր, որ ճանապարհները փակուելու պատճառով Կովկասից ոչ մի տեղեկութիւն չկար եւ երթեւեկութիւնը դադարել էր։

Պետրոս աղան իր մտադրութիւնը յայտնեց Սամսոն-խանին, խնդրելով նրա աջակցութիւնը, սակայն նա մերժեց աջակցել, իսկ Պետրոս աղան էլ նեղացած թողեց քաշուեց Ուրմի։

Այսպիսով շնորհիւ Սալմաստի չար հոգի Սամսոն խանի չիրագործուեց մի ձեռնարկութիւն, որ կարող էր մեծ դեր խաղալ Սալմաստի փրկութեան գործում։ Բայց դաշնակցականները իրենց գործունէութեան մէջ ազգի շահերն երբ են աչքի առաջ ունեցել, որ այստեղ աչքի առաջ ունենային եւ Սամսոն խանն ինչու պիտի բացառութիւն կազմէր իր համքարների շրջանում։

Հրանտ Սահառունի

(Կը շարունակուի)

715 20215

բութեան առաջին առարկաների թանգութիւնը: Իսկ շուկան հենց այս առարկաների ամենից աւելի տաք սպեկուլեացիա է անում: Ռուսական հացը, որով սնունդ էր առնում Վրաստանը, այլեւս չի ներմուծւում: Պատճառն այն է, նախ՝ որ թէ ինքն Ռուսաստանը չունի հացի բաւարար պաշար, և երկրորդ՝ Դենիկինի զօրքերը չեն թողնում դուրս տանել որեւէ բան, եթէ կայ, Վրաստան:

Այս վերջին ժամանակ հացը ստացւում է Ամերիկայից և նա համեմատաբար աժան գներով է վաճառւում բանուորներին և ծառայողներին: Սակայն այս հացը սակաւ է—կէս գրուանքայ մարդագլուխ, յայտնի բան է, անբաւարար է, մանաւանդ որ մեր ժողովուրդը սովոր է շատ հաց գործածել: Վրաստանը ունի իր ցորենը և աւելի շատ սիմինդը, որոնցով կարելի էր քաղաքին բաւականացնել: Բայց միայն հենց այս առարկաները դարձան սպեկուլեացիայի ազատութեան զոհ և սպեկուլեանտների հարստանալու աղբիւր:

Արհեստականապէս գների բարձրացումը սովորական երեւոյթ դարձաւ: Գները բարձրացնում է գիւղացին, որը սիմինդը ունի, նոյնպէս վաճառականը, որ կարողացել է իր ժամանակ սիմինդր հաւաքել, և այսպէս մէկը միւսի հետ մրցումի մէջ մտնելով՝ բարձրացնում են գները և այս բոլորը իբրև ծանր բեռն նստում է ժողովրդի վրայ, որ իր քրտինքով է ապրում և սակաւ աշխատավարձով է ստիպուած լինում պահել իրեն և իր ընտանիքը:

Թիֆլիսը այս կողմից առանձին ծանր պայմաններում է գտնւում: Համեմատաբար ասած՝ քաղաքի հանգիստ կեանքը մարդկանց մեծ բազմութիւն է քաշում դէպի ինքը, և նրանց կերակրելը անհնարին է դառնում: Հարուստ մարդիկ գալիս են այստեղ զանազան գիւղերից, գալիս են փախստականները, գալիս են գաղթականները, և ամենքն էլ ստիպուած են լինում մի քանի ժամանակ մնալ Թիֆլիսում: Կարողութիւն ունեցող մարդիկ բարձրացնում են գները, որպէսզի խեղճ մարդկանց վաճառելու հնարաւորութիւնից զրկեն և իրենք դառնան մենավաճառներ (մոնոպոլիստ) այն ապրանքների, որոնց պակասութիւնը զգալի է շուկայում:

Այս կերպով ծնւում է պաշարեղէնի կրիզիս աշխատաւոր ժողովրդի համար, երբ հասարակութեան հարուստ դասը այս վիճակից ազատ է մնում:

Պարենաւորման խորհուրդը և կառավարութիւնը միջոցների են դիմում այս անարդարութիւնն ուղղելու համար, սակայն մինչև այսօր գործ դրած միջոցները չտուեցին ցանկալի հետեւանքներ:

Ամերիկայի հետ կապած դաշնագիրը յայտնի չափով թեթեւացրեց հացի կրիզիսը, սակայն այս բաւական չէ: Առանց գնելու մեր երկրում գտնուած հացի և սիմինդրի պաշարով կարելի չի լինի կրիզիսը թուլացնել:

Իսկ գնելու գործը պարենաւորման խորհուրդը մինչև այսօր չի կարողացել պատշաճաւոր կերպով կազմակերպել: Ճշմարիտ է, այսօրուան խորհուրդը նախկինից աւելի լաւ է գործում, բայց եղած պահանջին այնուամենայնիւ չի կարողանում բաւարարութիւն տալ: Բացի՝ սրանից, նա իր քաղաքականութեամբ կայարանների փակումով և այլ միջոցներով մասնաւոր վաճառականներին արգելք է լինում սիմինդր մեզ մօտ բերելու:

Այս կերպ ոչ ինքն է բաւարար քանակութեամբ տալիս, ոչ էլ ուրիշին է թողնում այդ անելու: Ճշմարիտ է, մասնաւոր անձինք սպեկուլեացիայով կը զբաղուեն, բայց մի՞թէ հիմա էլ աւելի վատ սպեկուլեացիա չեն անում: Ծածկաբար մեզ մօտ բերած հացն ու սիմինդը մի՞թէ կրակի գնով չեն վաճառում:

Այս դրութիւնից դուրս գալ կարելի է երկու միջոցով. կամ պարենաւորման խորհրդին պիտի տրուի այնքան դրամագլուխ, որքան հարկաւոր է քաղաքի ապահովութեան կարիքը բաւարարելու, կամ թոյլ տրուի ազատ առեւտուր և մասնաւոր արդիւնաբերողներին թոյլ տրուի պարէնի ներմուծում մեր քաղաքը:

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնն առաջին միջոցի վրայ չյուսաց և ընտրեց երկրորդ միջոցը: Նա վճռեց վերցնել կայարաններում արգելքը և թոյլ տալ ազատ առեւտուր:

Մենք էլ ենք կարծում, եթէ կառավարութիւնը դրամագլուխ և հարկաւոր ապպարատ չունի այնքան հաց գնելու, որքան քաղաքին պէտք է, աւելի լաւ է, որ էլի ազատ առեւտուրը թոյլ տրուի:

Սպասել անկարելի է: Կառավարութիւնն անմիջապէս պէտք է հարկաւոր քայլ անէ: Բանուորութեան շարքերում մեծ խլրտումն կայ հացի թանգութեան հողի վրայ, և եթէ սրան վերջ չը լինի—մեր գլխաւոր հիմն—դեմոկրատիան, անիշխանութեան ջրապտոյտի մէջ կընկղմուի և անգամ մեր պետականութիւնը և դեմոկրատական նուաճումները վտանգի կենթարկուեն, մենք կառավարութիւնից վճռական համարձակ քայլի ենք սպասում:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ԼԻՏՒԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԴԻՄՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԻՍ ԲՈԼՈՐ ՏԷՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ ԵՒ ԱԶԳԵՐԻՆ

«Բոլոր ազգերին եւ տէրութիւններին»
Յուշագիր

Լիտւայի ազգի բովանդակ կամքի համաձայն, որ արտայայտուել է հետեւեալում. ա) 1917 թուին Վիլնայում տեղի ունեցած Լիտւայի կոնֆերենցիայի կողմից ընդունուած վճիռներում, որոնց հիմք են ծառայել Լիտւայի էական շահերը և Լիտւայի ազգի ընդհանուր ձգտումները:

բ) Լիտւայի Ազգային Խորհրդի և Ռուսական Լիտւայի Սէյմի կողմից ընդունուած վճիռներում:

գ) Ամերիկայում ապրող լիտւացիների Սէյմի կողմից ընդունուած վճիռներում, որոնց գործունէութիւնն ուղղուած է եղել Լիտւայի անկախութիւնը վերականգնելուն:

դ) Կիեւում կայացած ռուսական տէրութեան ազգութիւնների կոնգրեսի Լիտւայի բաժանմունքի վճռում. ե) Ստոկհոլմի Լիտւական երկրորդ կոնֆերենցիայի վճռում, Լիտւայի Պետական Խորհուրդը, որ բաղկացած է Լիտւայի բոլոր քաղաքական կուսակցութիւնների (բացի բոլշեւիկներից) ներկայացուցիչներից, դիմելով բոլոր կռուող և չէզոք պետութիւններին և աշխարհի բոլոր ազգերին, յայտնում է հետեւեալը.

Հիմնուելով Լիտւայի ազգի պատմական իրաւունքների, նոյնպէս և այն բանի վրայ, որ Լիտւան տնտեսական կողմից ներկայանում է որպէս մի անկախ հողային շրջան, ի նկատի ունենալով Լիտւայի ազգի իր անկախութեան համար մղած անդադար կռիւը և ամբողջ աշխարհում դեմոկրատիկ հոգու հսկայական զարգացումը և ժխտելով Ամերիկայի Միացեալ Նահանգների, Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի կողմից աշխարհիս ապագային վերաբերող սկզբունքներին, որոնց հիմքը ծառայում է հալածուած ազգերի ազատութեանը ինքնորոշման եղանակով, Լիտւայի պետական խորհուրդը երկրիս բոլոր տէրութիւններից պահանջում է, ճանաչել Լիտւայի ազգի իրաւունքը իր համար անկախ տէրութիւն ստեղծելու հարցում:

2) Սրա մասին բոլոր ազգերին ու տէրութիւններին տեղեկացնելով՝ Լիտւայի Պետական Խորհուրդը շեշտում է, որ լիտւացիք հրաժարուելով նախկին լիտւական մեծ իշխանութեան նահանգների վերաբերմամբ ունեցած իրաւունքներից, ձգտում են միմիայն ստեղծել լիտւական տէրութիւնը ազգագրական այն սահմաններում, ուր լիտւացի ազգն ապրում է անյիշատակ ժամանակներից, տալով նրան անհրաժեշտ տնտեսական պայմանները: Այս նպատակով Լիտւայի պետական խորհուրդը պահանջում է, որ անդամահատուած Լիտւայի բոլոր մասերը (Վիլնայի, Կովնայի և Սուվալկի նահանգները և Գրոդնոյի, Վիտեբսկի և Կուրլեանդիայի նահանգների մասերը, նոյնպէս և Փոքր կամ Պրուսական Լիտւան) կրկին վերածուեն մի լիտւական տէրութեան և որպէսզի Լիտւային, նրա տնտեսական նորմալ զարգացման համար դէպի Բալտիկ ծով ազատ ելք տրուի:

3) Լիտւայի պետական խորհուրդը պահանջում է տէրութիւններից և ազգերից, որպէսզի Լիտւացի ազգին իրաւունք տրուի, որ նա ինքը Վիլնա քաղաքում Սահմանադիր Ժողովի միջոցով, որ ընտրուած է ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ձայնատուութեամբ, առանց սեռի, կրօնի և ազգութեան խտրութեան, որոշէ իր յարաբերութիւնը դէպի միւս տէրութիւնները:

4) Լիտւայի պետական խորհուրդը հանդիսաւոր կերպով յայտարարում է, որ լիտւացիք հետեւելով իրենց նախնիքների աւանդութիւններին և ղեկավարուելով արդարութեան և դեմոկրատիզմի սկզբունքներով, լիտւական տէրութեան մէջ գտնուած ազգային փոքրամասնութիւնների համար երաշխաւորում են ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք անհրաժեշտ են նրանց կուլտուրական ազատ զարգացման համար:

5) Լիտւայի պետական Խորհուրդը պահանջում է, որ լիտւական անկախ տէրութեան վերականգնումը պիտի վերապահուի միջազգային կոնգրեսին և թէ միջազգային հարցերը վճռելու հարցում Լիտւան իրաւունք ունենայ մասնակցելու իր ներկայացուցիչների միջոցով առաջիկայ խաղաղութեան կոնգրեսին:

6) Լիտւայի Պետական Խորհուրդը ժողովրդի աւերուած տնտեսութիւնը վերականգնելու հոգսն աչքի առաջ ունենալով, պահանջում է:

ա) Լիտւա վերադարձնել պատերազմի ընթացքում, Լիտւայից դուրս տարուած երկաթուղային, պօստային, հեռագրական և միւս պետական ու հասարակական հիմնարկութիւնների գոյքերը, որպէս լիտւական տէրութեան անվիճելի սեփականութիւն:

բ) Լիտւային հատուցանել այն վնասները, որ կրել է նրա ազգաբնակութիւնը պատերազմական գործողութիւններից ու գերմանական բռնագրաւումից:

գ) Վնասների տեսակի և չափի որոշումը յանձնել միջազգային յանձնաժողովին, որին անպայման պիտի մասնակցեն Լիտւայի ներկայացուցիչները:

Լիտւայի պետական խորհուրդ
Վիլնօ

ԳՐԱԿ.-ԳԵՂԱՐՈՒԵՍՏ.

ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴԷՍ ՎՐԱՑ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ

I

Մօտ 10 օր է, ինչ բացուել է վրացի նկարիչների պատկերահանդէսը նախկին Փառքի տաճարում: Ի ցոյց են դրուած մինչև 15 նկարիչների ու քանդակագործների գործեր:

Երբ ներս էք մտնում, իսկոյն տեսնում էք մօտ 80-ի չափ կէս արձաններ, որոնք անմիջապէս գրաւում են ձեր ուշադրութիւնը:

Անցնենք անդրիներից դէպի աջ. այստեղ առաջինը ցուցադրուած են 17 տարեկան նկարչի՝ Հերակլէ Թոիձէի նկարները՝ թուով 10՝ (դրանց մէջն են մատիտով նկարած գրուպպաներն ու էսկիզները). երիտասարդը, երեւում է, որ տարուած է նոր ուղղութեամբ, մասամբ էլ հետեւում է հին մանրանկարչութեան ձեւին, որ մնացել են մեզ եկեղեցական գրքերի լուսանցքներում. երեւում է, որ նկարիչը շնորքի տէր է, սակայն նորաձեւութիւնն այնքան շեղել է նրան նորմալ դրութիւնից, որ նա ընկել է չափազանցութիւնների մէջ. ճիշտ է, նրա գոյների մէջ կայ ներդաշնակութիւն, բայց չի կարող տակաւին իր ստացած տպաւորութիւնները հաղորդել դիտողին: Նրա իւղանկարների մէջ չկայ կեանք, այլ անշարժ դէմքեր խիստ հաստ կոնտուրներով. մինչդեռ երբ դուք նայում էք նրա մատիտով նկարած գործերին՝ բոլորովին ուրիշ բան էք տեսնում. կեանք, շարժում:

Սրա կողքին դրուած են նրա հօր՝ Մոսէյ Թոիձէի նկարները, որպէս նկարիչը ծանօթ պիտի լինի Թիֆլիսի հայ հասարակութեան. Նրա պատկերները մի քանի անգամ ցուցադրուած են եղել պատկերահանդէսներում: Այս նկարներով Մ. Թոիձէն իր հին գոյների վրայ մի բան չի աւելացնում. նա խիստ շատ է տարուել նոր հովերով և գոյներին աւելի խտութիւն տուել: Ինչպէս որդու, այնպէս էլ հօր նկարների—ֆիգուրների—մէջ չկայ գեղարուեստական ճշմարտութիւն. օրինակ, եթէ նկարի գլուխը իր չափով 7 անգամ է մեծ լինելու մարմնից, այստեղ 10—17 անգամ մեծ է:

Սրա ցուցադրած գործերի մէջ էական տեղ պիտի բռնէր (իր մեծութեամբ ու բովանդակութեամբ) յեղափոխութիւնը, որը նոյնպէս նոր ստիլի նկար է, ներկերի, եթէ կարելի է այսպէս ասել, ծեփածոյ. հորիզոնում սաւառնակներ, նրանց մօտ դեղին գոյներ, խիտ ամպեր, ներքեւում բանուորների (մինչև իսկ փայլանով մշակների) կատաղի կռիւ, որից ընկել են շատերը. այստեղ նկատում էք, որ ընկած ֆիգուրների համար ոչ մի խնամք չէ տարած և ամեն բան զոհած է նորից նորաձեւութեան, այդ իսկ պատճառով էլ նկարը ոչ մի տպաւորութիւն չի թողնում նայողի վրայ, իր յեղափոխութեան գաղափարներով...

Սակայն այս տեսակ մի շարք նկարների կողքին դուք կը տեսնէք երեք շնորհալի կենցաղագրական (եթէ չենք սխալւում տեմպերա) նկար, վերցրած վրաց հարազատ կեանքից. դրանք են՝ ճօճանակ, շալ գործելը, և բակ (հաշտ). Նրանց լոյսը տուած է վերևից, շատ բնական. այնտեղ, որտեղ թախտերի վրայ փռած կարպետներն են, այնքան բնական են դուրս բերած իրենց մօտի շարժուն մարդկանցով, տան ներսի սարքով ու ձեւով, որ մի րոպէ ձեզ հանգստացնում են առաջուց (միւս նկարներից) ստացած ծանր տպաւորութիւնից. մանաւանդ Շալ գործելը նկարում առաջին մակարդակում նստած կինը իր յաջող դիրքով ու լոյսով միանգամայն համոզում է ձեզ Մ. Թոիձէի շնորքի տէր լինելը: Այս երեք նկարն էլ վրաց կառավարութիւնը գնել է իր թանգարանի համար:

Նրանից յետոյ գալիս է Գր. Գաբաշվիլու նկարը՝ պորտրետ Մ. Մ.-ի. սա հաստատացած մի գործ է գեղարուեստական իր բոլոր ճշտութեամբ ու գոյների զգայած ներդաշնակութեամբ. մանաւանդ զգեստը, մուշտակի վրայի մորթին այնքան բնական են դուրս եկել, որ կասես, արդարև, ձեր առաջ մի գեներալ է նստած՝ իր ասիական զգեստով, սակայն ափսոս որ դէմքի ու ձեռքերի—մարմնի գոյնի մասին չի կարելի նոյնը ասել. այստեղ մարմինը իսկական կաշու հարազատութիւն չէ: Հին նկարիչների համար մարմին նկարելը ամենամեծ փորձաքարն է եղել. և շատ քչերն են եղել, որ կատարելապէս հասել են դրան, մանաւանդ դէմքի վերաբերմամբ, որը միշտ խաղուն է և չենթարկուող վրձինի: Այս նկարչի միւս գործն է Սամարկանդի բազարը, որ հետեւողութիւն է Վերեշչագինին. նկարը ըստ ամենայնի յաջող է, թէև գալուկ, շատ տեղեր լոյսի չափազանցանք և շուաքի պակասութիւն. ինչպէս երեւում է դեռ չվերջացած մասեր ունի. սակայն բոլոր ֆիգուրները հարազատ են. կայ շարժում, կեանք և գոյների մեծ ներդաշնակութիւն. մեզ թւում է, եթէ նկարիչը էլի աշխատանք գործ դնէ այս նկարի վրայ՝ նկարը շատ կը շահի և մի նշանաւոր տեղ կը բռնէ վրաց նկարչութեան մէջ: Սրա երրորդ նկարն է «Զատիկ օրը». սա թէև իր դիրքով փոքր է, սակայն գեղարուեստական տեսակէտից յաջող մի էտիւդ. եղած դէմքերը, օրուայ շնորհքէ, ուրախ ու խիստ արտայայտիչ են, տարբեր դիրքերով և հարազատ արտայայտութիւններ վրաց կեանքի:

Գ. Գաբաշվիլու մօտ կան դրուած, եթէ չենք սխալւում, Վաս. Ջորջաձէի պորտրետները. Նրա բոլոր նկարները ասում են, որ հեղինակը միմիայն պորտրետիստ է: Բոլոր գործերը նկարուած են համարեա մի տեսակ. բոլոր դէմքերն էլ խիստ գունաւոր և հեռու մարմնի արտայայտելուց. նկարիչը, երեւում է, որ հետեւում է հին, թերեւս հոլանդական շկոլայի, սակայն կատարելութիւնը պակաս է. դէմքերի վրայ չկայ խօսունութիւն:

Այս նկարչից յետոյ գալիս է ֆուտուրիզմի ու, այսպէս ասած, ռեբուսի հարազատ ներկայացուցիչներից մէկը՝ Դ. Կակաբաձէ: Սա հանելուկային ձեւով, դաշտ արտերով. ցոյց է տալիս յեղափոխութեան արած նուաճումները վերջին 1914—15—16—17—18—19 տարիներում. այդ դեռ բաւական չէ, ունի մի նկար՝ կիսաշրջանները իրար մէջ զանազան գոյներով և (ցուցակում) գրած է աւտոպորտրետ. որքան նայեցինք չկարողացանք այդ ռեբուսը լուծել, պորտրետը գտնել. իսկ դրանից աւելի խիստ ռեբուս է № 106 նկարը՝ «Թագուհի Իմերէթում». սա կասես կոլոմնաների մի շարան է, իրար մօտ դարսած տասնեակներով զանազան ուղղութեամբ. սրա վրայ էլ որքան նայեցինք՝ չկարողացանք եզրակացութիւն - բովանդակութիւն դուրս բերել:

Բայց ասել, թէ այդ նկարիչը շնորք չունի, ոչ, նրա մի նկարը—թեշիկով բուրդ մանող կինը, ցոյց է տալիս, որ շնորքի տէր է. նայեցէք դուք այդ կնոջ դէմքի գծագրութեան, նրա վրայ առաջացած մկանունքներին, ձեռքերի դիրքին ու նրանց վրայի մանրամասնութիւններին, հենց կնոջ նստուածքին ու հայեացքին, իսկոյն կասէք, որ կենդանի կին է, գործ է անում:

Այս մի քանի նկարիչները դահլիճի աջ մասումն են. այժմ անցնենք ձախ:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԼԵԳԻԱ
Հրատարակիչ՝ Հայ Ժողովրդական Կուսակցութիւն

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԳՆԱՑՔՆԵՐԻ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ

ԳՆԱՑՔՆԵՐԸ ԹԻՖԼԻՍԻՑ ԳՆՈՒՄ ԵՆ ՓՈԹԻ

Գ. № 1 ճեպընթաց՝ երեկ. 7 ժ. 30 ր.
Միխայլովից —գիշ. 10 ժ. 52 ր.
Շորապանից —գիշ. 1 ժ. 34 ր.
Սամտրեդիից—գիշ. 3 ժ. 50 ր.
Փոթի հասնում է առաւ. 5 ժ. 50 ր.

Պլացկարտի գինը բոլոր վագոններում 20 ռուբլի է:

Գ. № 2 պոստատար՝ առ. 10 ժ. 30 ր.
Միխայլովից — ցեր. 8 ժ. 8 ր.
Շորապանից— երեկ. 6 ժ. —
Սամտրեդիից— եր. 8 ժ. 34 ր.
Փոթի է հասնում գիշ. 10 ժ. 43 ր.

Պլացկարտի գինը բոլոր վագոններում 10 ռուբլի է:

Գ. № 9 ճանապարհորդական մինչեւ Քութայիս

Դուրս է գալիս երեկ. 10 ժ. 30 ր.
Քութայիս է հասնում առ. 7 ժ. 21 ր.

Պլացկարտի գինը բոլոր վագոններում 5 ռուբլի է:

Գ. № 19 ճանապարհորդական մինչեւ Բորժոմ

Դուրս է գնում ցերեկ. 3 ժ. 30 ր.
Գօրուց երեկ. 6 ժ. 30 ր.
Բորժոմ է հասնում եր. 9 ժ. 27 ր.
Պլացկարտի գինը բոլոր վագոններում 5 ռուբլի է:
Գ. № 4 պոստատար՝ մինչեւ Բագու
Դուրս է գնում գիշեր. 1 ժ. 10 ր.

Գ. № 8 ճանապարհորդական՝ մինչեւ Գանձակ

Դուրս է գնում ցերեկ. 3 ժ. 35 ր.
Գ. № 6 ճեպընթաց՝ երեկ. 9 ժ. —
Պլացկարտի գինը մինչեւ Բագու՝ I կլ. համար 60 ռ., II կլ.—40 ռ., III կլ.—20 ռ.:

ԴԷՊԻ ԿԱՐՍ—ԵՐԵՒԱՆ

Գ. № 4 մարդատար—ցեր. 1 ժ. 40 ր.

ԹԻՖԼԻՍ ԵԿՈՂ ԳՆԱՑՔՆԵՐԸ ՓՈԹԻԻՑ ԹԻՖԼԻՍ

Գ. № 2 ճեպընթաց —առ. 9 ժ. 41 ր.
Փոթիից դուրս է գալիս եր. 11 ժ.—
Գ. № 4 պոստատար—եր. 8 ժ. —
Փոթիից դուրս է գալիս առ. 7 ժ. 40 ր.

Գ. № 12 Քութայիսից

Գալիս է — — — երեկ. 8 ժ. 15 ր.
Քութ. դուրս է գալիս եր. 10 ժ. 10 ր.

Գ. № 20 Բորժոմից

Գալիս է — — — առաւ. 7 ժ. 20 ր.
Բորժ. դուրս է գալիս գիշ. 12 ժ. 46 ր.

ԲԱԳՈՒԻՑ

Գ. № 3 պոստատար—ցեր. 4 ժ. 30 ր.
Գ. № 5 ճեպընթաց—առ. 7 ժ. —
Գ. № 7 ճանապարհ. Գանձակից առ. 8 ժ. 30 ր.
Գ. № 5 պլացկարտով. պլացկարտի գինը I կլ. 60 ռուբ., II կլ.—40 ռ., III կլ.—20 ռուբլի է:

ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ ԵՒ ԿԱՐՍԻՑ

Գ. № 3 պոստատար—առ. 11 ժ. 30 ր.

Բացի դրանցից գնացքներ են երթեւեկում կիրակի և տօն օրերին ԹԻՖԼԻՍԻՑ ՄՑԽԵԹ
հետեւեալ գնացքներն են երթեւեկում.
Գ. № 61 [illegible]
Գ. № 63 — — — ցեր. 3 ժ. —

Մցխեթից գալիս են

Գ. № 62 — — առաւ. 11 ժ. 10 ր.
Գ. № 64 — — երեկ. 7 ժ. 20 ր.

ՑՈՒՑԱԿ
Հայաստանի Հանրապետութեան գնացքների երթեւեկութեան

Այս տարուայ ապրիլի 14-ից մարդատար գնացքները Երեւանից Սանահին մեկնելու են շաբաթը 4 անգամ

Երեւանից—Սանահին
մեկնում է

Երեքշաբթի
Հինգշաբթի
Շաբաթ
Կիրակի
առ. ժ. 8-ից անց 20 ր.

Սանահինից - Երեւան
վերադառնում

Երկուշաբթի
Չորեքշաբթի
Ուրբաթ
Կիրակի

Հայաստանի Հանրապետութեան գնացքների երթեւեկութիւնը Սանահինում յարմարեցուած է վրացական գնացքների մեկնելու հետ:

ԱՌԱՋ. ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնուած 1880 թ.
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Բաց է՝ ամեն օր, բացի կիրակի օրերից.
«606» եւ «914»-ի ներարկում առաւօտեան ժ. 11—12.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութիւն, վեներական (սիֆիլիս) հիւանդութիւններ:
Բ. Ի. ԱՂԱՍԱՐԵԱՆ—10—12 ժ. ներքին ջղային երեխայոց հիւանդութիւնն և ծաղկանատ:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու հիւ. վիրաբուժութիւն և վեներակ. (սիֆիլիս) հիւ.:
Ռ. Մ. ՎԱՅՆ—12—1 ժ. երեքշ. հինգշ. շաբաթ—կանանց հ. և մանկաբարձ.:
Է. Ս. ԿԱՐՈՒԿԵՍ — ԲԷԲՈՒՐԻՇԻՎԻԼԻ—12—1 ժ. երկուշ. չորեքշ. ուրբաթ—կանանց հիւ. և մանկաբարձ.:
Ց. Ա. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ.:
Վճարը 3 ռ.: Զքաւորները ձրի: Համախորհրդի և կոնսիլիումի ու օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
0—17 Բժշկապ. Բ. Նաւասարդեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Երիտասարդ Գրողների գրադարան
№ 2.
ՍՏ. ԶՕՐԵԱՆ
ՏԽՈՒՐ ՄԱՐԴԻԿ
(Պատմուածքներ)
Հատոր I.
Ն. ԱՂԲԱԼԵԱՆԻ քննականով և հեղինակի պատկերով: Մօտ 200 էջ: Շքեղ հրատարակութիւն:
Գինը 8 ռ.
Դիմել Թիֆլիս՝ «Գիր» գրախանութին և Միսանիկովի թիթախանութին: Պահեստ «Մամուլ» տպարան: 10—9

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒ ՀԱՇՈՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Հայերի մէջ առեւտրական կրթութիւն տարածող կովկասեան ընկերութեան:
Նիկոլայեսկի № 36:
0—104 Տեսուչ՝ Գ. Կ. Տէր-Դաւթեան

„ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ“-Ի
գրասենեակում վաճառւում է նրա հրատարակութեամբ լոյս տեսած
ԳԷՈՐԳ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ
ՁԵՄՍՏՒՈՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ և ՎՐԱՍՏԱՆՈՒՄ
ԳԻՐՔԸ
Գինը 50 կոպեկ:
Դիմել գրասենեակ՝ Гановская, 3.
0—92

Տպարան «Մամուլ»—տնօրէններ Մ. Եփրեմեան և Յ. Մալխասեան. Լորիս-Մելիքեան փող., № 22.